# ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ (ուսմասվար) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

| Ամիս-ամսաթիվ | Պլան-բովանդակություն |
|---|---|
| 22.08 | Մանկավարժական խորհրդի օգոստոսյան նիստ.<br>• խորհրդի կազմի հաստատում.<br>• քարտուղարի ընտրություն<br>• ուսպլանի հաստատում |
| 20.08 | Վերանայել նախնական դասաբաշխումը, վերջնական տեսքով ներկայացնել տնօրենի հաստատմանը, որից հետո գրանցել «emis.am»-ում |
| 20-30.08.22 | Գրել նոր ուսումնական տարվա դասացուցակը և ներկայացնել հաստատման: |
| 19 -29 .08 | Կազմակերպել և անցկացնել ամառային ստուգման մնացած աշակերտների վերաքննությունները:<br>Տնօրենի հրամանով ձևավորել վերաքննությունների հանձնաժողովներ. |
| 22.08 | • <<Տեղեկատու>> տախտակին փակցնել վերաքննության օրերի գրաֆիկը:<br>• Պատրաստել տարբեր առարկաների վերաքննությունների արձանագրությունները:<br>• Իրազեկել տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի անդամներին:<br>• Դասղեկ-դաստիարակներին հանձնարարել, որ վերաքննության մնացած աշակերտներին և նրանց ծնողներին անձամբ տեղեկացնեն և ապահովեն նրանց ներկայությունը:<br>• Անձամբ մասնակցել վերաքննությունների անցկացման գործընթացին և արդյունքների մասին իրազեկել տնօրենին: |
| 22.08 | Ծանոթանալ ստեղծված քննատոմսերին և թեստային տարբերակներին՝ հաշվի առնելով առարկայական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր նվազագույն մակարդակի ապահովումը: |
| 23-27.08 | Դասագրքերի բաշխում. |
| 25.08 | Հետամուտ լինել, որ մեթոդմիավորումների նախագահները կազմակերպեն նիստեր և նրանց հետ անձամբ քննարկել ծրագրերը՝ ձեռքի տակ ունենալով վերջին փոփոխությունները (եթե կան): |

| | |
|---|---|
| **29.08** | Կազմակերպչական գծով տեղակալի հետ նախապատրաստվել ուսումնական տարվա առաջին օրվա հանդիսավոր բացմանը: |
| **29-30.08** | Աջակցել ուսուցման նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին: |
| **30-31.08** | Հանրակրթական դպրոցի դասընթացի կազմակերպում<br>ՈւԴԱՊ-ի հաստատում: |
| **30.08-05.09** | Ամփոփել դպրոցի ներքին գնահատման արդյունքները և վերբեռնել դպրոցի կայքէջում: |
| **30.08** | Դասացուցակը, դասաբաշխումը և հաստիքացուցակը վերբեռնել էլմատյանում |
| **Սեպտեմբեր մայիս** | Յուրաքանչյուր ամսվա վերջում դասղեկ դաստիարակների հետ քննարկել մի քանի առարկաներից արդեն անբավարար ստացած աշակերտների հարցը, որից հետո հավաքել և զրուցել այդ աշակերտների հետ՝ անհրաժեշտության դեպքում հանդիպել նաև ծնողների հետ, իսկ առանձին դեպքերում, ստանալով ծնողի համաձայնությունը, աշխատել **հոգեբանի** հետ: |
| **Սեպտեմբեր մայիս** | • Կազմակերպել սովորողների ուսումնական պարապմունքների հսկողությունը<br>• Պարբերաբար գնալ դասալսումների, կազմակերպել փոխադարձ դասալսումներ, իսկ հաջողված դասերի ուսուցիչներին հորդորել, որպեսզի կազմակերպեն փորձի փոխանակման սեմինար-պարապմունքներ: |
| **03-05.10** | Նախապատրաստվել <<Ուսուցչի օրվա>> հետ կապված միջոցառման պատշաճ անցկացմանը: |
| | |
| **1-15.09** | • Պլանավորել բաց դասերի անցկացման գրաֆիկը:<br>• Հետևել ուսումնական ծրագրերի կատարմանը, դասավանդման որակի և կրթական չափորոշիչներով սովորողների պատրաստվածությանը ներկայացվող պահանջների ապահովմանը:<br>• Աջակցել հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական շարունակական զարգացմանը: |
| **Տարվա ընթացքում** | Հսկել և իրականացնել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը:<br>Հետևել կարգապահական կանոնների ընթացքին: |
| **Հոկտեմբեր և ապրիլ** | Պլանավորել բնագիտամաթեմատիկական առարկաների միասնական գրավոր աշխատանքների անցկացում: |
| **Դեկտեմբեր հունվար** | • Կազմակերպել և անցկացնել դպրոցական օլիմպիադայի I փուլը:<br>• Դպրոցական օլիմպիադայի I փուլից հետո ամփոփել արդյունքները և <<Տեղեկատու>> տախտակին փակցնել II փուլ անցած աշակերտների ցուցակները:<br>• Հետևել թեմատիկ և գործնական աշխատանքների կատարման |

| | |
|---|---|
| | մեթոդական և քանակային գործընթացին: |
| **26-27.12** | Ամփոփել I կիսամյակում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի հաշվետվությունը՝ պատրաստվելով այն ներկայացնել մանկավարժական խորհրդի նիստին: |
| **Դեկտեմբեր** | Կազմակերպչական գծով տեղակալի հետ նախապատրաստվել Ամանորի ցերեկույթի անցկացման ընթացակարգին: |
| **Դեկտեմբեր** | • Մանկավարժական խորհրդի նիստից հետո թույլատրել, որ ուսուցիչներն I կիսամյակի թվանշաններն հաստատել էլեկտրոնային մատյաններում:<br>• Ստուգել էլեկտրոնային մատյանները |
| **04-08.01** | Կազմել II կիսամյակի դասացուցակը, ներկայացնել հաստատման, ներբեռնել «emis.am»-ում : |
| **04-08.01** | Կազմակերպել և վերահսկել II կիսամյակի առարկայական մեթոդմիավորումների նիստերը: |
| **10-15.01** | Կազմել տվյալ ուսումնական տարվա ընթացքում վերապատրաստման ենթակա ուսուցիչների ցուցակը և համաձայնեցնել տնօրենի հետ: |
| **Հունվար** | Պատրաստվել առարկայական օլիմպիադաների մարզային փուլին: |
| **Հունվար** | Մշտական հսկողության տակ պահել ուսումնական պարապմունքների ընթացքը, հետևել սովորողների առաջադիմությանը, պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ, լսել հոգեբանի հաղորդումը: |
| **Տարվա ընթացքում** | Իրականացնել դասավանդման որակի և կրթական չափորոշիչներով ու ծրագրերով սովորողների պատրաստվածությանը ներկայացվող պահանջների ապահովումը: |
| **Հունվար մարտ** | Կազմակերպել առարկայական լրացուցիչ պարապմունքներ օլիմպիադայի հանրապետական փուլ անցած աշակերտների հետ (եթե կան): |
| **Հունվար մարտ** | Ակտիվ և անձնական մասնակցությամբ խրախուսել աշակերտներին, որ նրանք ընդգրկվեն հասարակական տարբեր աշխատանքների: |
| **01-09<br>30-05** | Տարբեր առարկաների մեթոդմիավորումների նախագահների հետ կազմակերպել դասալսումներ, քննարկումներ, լսումներ: |
| **Մարտ** | Ըստ գրաֆիկի կազմակերպել II կիսամյակի գրավոր աշխատանքի պլանը: |
| **Մայիս** | Ամփոփել II կիսամյակի արդյունքները: |
| **Մայիս** | Պատրաստել հաշվետու զեկույց և ներկայացնել տնօրենին, որի դիտարկումներից հետո ամփոփիչ տարվա աշխատանքը և մանկավարժական խորհրդի նիստին զեկուցել ուսուցիչներին: |
| **Մայիս** | Տնօրենի անմիջական ղեկավարությամբ քննարկել ավարտական և միասնական քննությունների անցկացման կարգը, կազմել հանձնաժողովներ և վերահսկել գործընթացը: |
| **16-20.06** | Կազմակերպել տարբեր մեթոդմիավորումների նախնական դասաբաշխումը: |
| **հունիս** | Քննություններից հետո ամփոփել արդյունքները և զեկուցել մանկավարժական խորհրդի նիստին: |
| **Տարվա ընթացքում** | Սեփական գործելակերպով նպաստել կոլեկտիվի միասնությանը, լինել հաշտարար՝ պատրաստ ցանկացած օգնության: |